

INTERDISCIPLINARY CONNECTIONS: LITERATURE AND MUSIC

Armenuhi Arzumanyan

PH.D., Associate Prof., YSU

Armenia

armenuhiarzumanyan@mail.ru

Summary

In the article entitled "interdisciplinary connections: literature and music" we tried to show the features of the application of this method of teaching, due to the nature of the taught material and the originality of the writer's imaginative system, the age groups of students. We have considered several approaches to the application of the method.

The purpose of the article is to reveal the essence of the above method with the help of interesting observations, paying attention to the principles of studying the material in this way, indicating and justifying the advantages due to the relevant features of this type of training, the features arising from the purpose of training.

The novelty of the research is the consideration of various approaches to the application of interdisciplinary communication literature – music and their features. Using the above method, parallel analyses of a work of art and a piece of music were investigated, emphasizing the relationship between words and sound.

The relevance of the research is due to the need for modern teaching methods to consider the process of teaching literary works, making it consonant with modern educational programs. In the article we have shown the effectiveness of using various approaches of interdisciplinary communication between literature and music, the possibility of a more meaningful and multilevel study of artistic creativity with their help.

As a result of the research, we came to the following conclusions: the use of interdisciplinary literature-music communication contributes to a deeper analysis of the taught material, the formation of students' skills to create interdisciplinary connections, a large-scale presentation of a work of art, makes the lesson more interesting and meaningful.

Keywords: phrases, phonograms, synesthesia, feeling, ideological issues, means of icon painting.

МЕЖПРЕДМЕТНЫЕ СВЯЗИ: ЛИТЕРАТУРА И МУЗЫКА

Арзуманян Арменуи

Канд. фил. Наук, доцент

ЕГУ, Армения

armenuhiarzumanyan@mail.ru

Аннотация

В данной статье мы попытались показать особенности применения метода междисциплинарных связей при обучении, обусловленные характером преподаваемого материала и оригинальностью образной системы писателя, возрастными группами учащихся. Мы рассмотрели несколько подходов к применению метода.

Цель статьи – с помощью интересных наблюдений раскрыть сущность вышеуказанного метода, обращая внимание на принципы изучения материала данным способом, указав и обосновав обусловленные соответствующими особенностями данного вида обучения преимущества, особенности, вытекающие из цели обучения.

Новизна исследования является рассмотрением различных подходов к применению междисциплинарной связи «литература – музыка», их особенностей. Вышеуказанным методом параллельно были исследованы художественные и музыкальные произведения, установлена взаимосвязь между словами и звуком

Актуальность исследования обусловлена необходимостью рассмотрения современной методики обучения посредством изучения в процессе обучения литературного произведения, делая его созвучным современным образовательным программам. В статье мы показали эффективность применения различных подходов междисциплинарной связи между литературой и музыкой, возможности более содержательного и многоуровневого изучения художественного творчества с их помощью.

В результате исследования мы пришли к следующим выводам: применение междисциплинарной связи «литература-музыка» способствует более глубокому анализу преподаваемого материала, формированию у учащихся навыков создания междисциплинарных связей, широкомасштабному представлению художественного произведения, делая тем самым урок более интересным и содержательным.

Ключевые слова: словосочетания, фонограммы, синестезия, чувство, идеологические вопросы, средства иконописи.

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Արզումանյան Արմենուհի
բան. գիտ. թեկնածու, դոցենտ
ԵՊՀ, Հայաստան
armenuhiarzumanyan@mail.ru

Ամփոփում

«Միջառարկայական կապեր. գրականություն և երաժշտություն» վերառաջարկումը հողվածում փորձել ենք ցույց տալ ուսուցման այս եղանակի կիրառման յուրահատկությունները՝ պայմանավորված ուսուցանվող նյութի բնույթով և գրողի պատկերային համակարգի ինքնատիպությամբ, աշակերտների տարիքային խմբերով: Դիտարկել ենք մեթոդի կիրառման մի քանի մոտեցումներ:

Հողվածի նպատակն է հետաքրքիր դիտարկումներով բացահայտել վերոնշյալ մեթոդի էությունը, տվյալ եղանակով նյութի ուսուցման սկզբունքները՝ մատնանշելով ու հիմնավորելով դասավանդման այդ տեսակի համապատասխան առանձնահատկություններով պայմանավորված առավելությունները, ուսուցման նպատակից բխող յուրահատկությունները:

Հետազոտության նորույթն է գրականություն-երաժշտություն միջառարկայական կապի կիրառման տարբեր մոտեցումների, դրանց առանձնահատկությունների դիտարկումը: Վերոնշյալ մեթոդով քննաբանվել են գեղարվեստական երկի և երաժշտական ստեղծագործության զուգահեռ վերլուծությունները՝ շեշտադրելով բառի ու ձայնի գեղաձևումների փոխկապակցվածությունը:

Հետազոտության արդիականությունը պայմանավորում է ուսուցման ժամանակակից մեթոդաբանության պահանջներով դիտարկել գրական երկերի ուսուցման գործընթացը՝ այն դարձնելով ժամանակակից կրթական ծրագրերին համահունչ: Հողվածում ցույց ենք տվել գրականություն-երաժշտություն միջառարկայական կապի տարբեր մոտեցումներով կիրառման արդյունավետությունը, դրանց օգնությամբ գեղարվեստական ստեղծագործության առավել բովանդակային ու բազմաշերտ ուսումնասիրության հնարավորությունները:

Հետազոտության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին. գրականություն-երաժշտություն միջառարկայական կապի կիրառումը նպաստում է ուսուցանվող նյութի առավել խորքային վերլուծությանը, աշակերտների կողմից միջառարկայական կապեր ստեղծելու հմտությունների ձևավորմանը, գեղարվեստական ստեղծագործության լայնածավալ ներկայացմանը, դասը առավել հետաքրքիր և բովանդակալից դարձնելուն:

Բանալի բառեր: Բառակառույցներ, ձայնապատկերներ, սինեսթեզիա, համազգացողություն, գաղափարական հարցադրումներ, պատկերակերտման միջոցներ:

Հիմնական նյութի շարադրանքը: Հոդվածի նպատակն է հետաքրքիր դիտարկումներով բացահայտել գրականություն-երաժշտություն միջառարկայական կապի էությունը, դրա տարբեր մոտեցումներով կիրառման հնարավորությունները, որոնք պայմանավորում են ուսուցանվող նյութի բազմաշերտ ուսումնասիրություն:

Հետազոտության հիմնախնդիրն է բացահայտել գրականություն-երաժշտություն միջառարկայական կապի կիրառման առանձնահատկությունները, մեթոդի՝ որպես ուսուցման հետաքրքիր ձևի առավելությունները՝ գրական երկի և երաժշտության զուգահեռ վերլուծության հնարավորություն, գրական և երաժշտական ստեղծագործությունների պատկերային համակարգի ընդհանրության ու ինքնատիպության շեշտադրում:

Մեթոդական գրականության մեջ կան վերոնշյալ հիմնախնդիրն նվիրված մի շարք գիտական հետազոտություններ՝ «Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ» (ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր, 2008), «Ուսուցման արդյունավետ հնարներ» (Ս. Խաչատրյան, «Էր. Ֆ. Էբերտ» հիմնադրամ, Հայաստան, 2020), «Technology for literacy teaching and learning» (Valmont W., New York, Houghton Mifflin Company, 2006), «Classrooms that work» (Allington R. And Cunningham P., Boston, Allyn and Bacon, 2004): Նրանք փորձել են յուրովի ներկայացնել ուսուցման ժամանակակից մեթոդներին բնորոշ առանձնահատկությունները, կիրառման յուրահատկությունները:

Հետազոտական հարցը գրականություն-երաժշտություն միջառարկայական կապի կիրառման առանձնահատկությունների դիտարկումն է:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Սույն ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել մանկավարժներին և ուսանողներին նմանօրինակ հետազոտություններ կատարելիս:

Ուսուցման ժամանակակից մեթոդների շարքում հետաքրքիր և արդյունավետ են միջառարկայական կապերը, երբ զուգահեռներ են ստեղծվում գրականության և այլ առարկաների միջև: Պայմանավորված ուսուցանվող նյութով՝ միջառարկայական կապեր կարելի է ստեղծել տարբեր զուգահեռումներով: Առավել հետաքրքիր է գրականություն ու արվեստ միջառարկայական կապը, որը հնարավորություն է տալիս շփվելու արվեստի տարբեր գործերի հետ, ծանոթանալու համաշխարհային մշակույթի լավագույն ստեղծագործություններին: Հետաքրքիր կլինի գրականություն-երաժշտություն միջառարկայական կապի ստեղծումը, որը դասը կդարձնի առավել արդյունավետ ու յուրօրինակ: Գրականություն-երաժշտություն կապը կարելի է ստեղծել մի քանի մոտեցումներով:

1-ին մոտեցում

Միջին դասարաններում գրականություն-երաժշտություն կապը կարելի է ստեղծել այնպիսի ստեղծագործությունների ուսուցման ժամանակ, որոնց հիման վրա գրվել են երաժշտական գործեր: Օրինակ՝ Մ. Մեծաբենցի, Վ. Տերյանի, Ա. Բսահակյանի բանաստեղծական աշխարհն ուսումնասիրելիս կարելի է դասի ժամանակ բանաստեղծությունների ընթերցմանը զուգահեռ լսել մեծ պոետների ստեղծագործությունների հիման վրա գրված երաժշտական կատարումները: Վստահաբար մատուցման այդ ձևը կնպաստի բանաստեղծության ավելի խորունկ ընկալմանը, երաժշտական աշխարհի ձայնային զարգացումները, մեղեդու կախարդական ուժը աշակերտի հոգում կարթնացնեն զգացողությունների հետաքրքիր դրսևորում. բանաստեղծական պատկերի և ձայնային գեղաձևումների զուգահեռ ընկալումը կբացի հոգեթով հույզերի այն աշխարհը, որը կերտել է բանաստեղծն իր խոսքում: Առավել հետաքրքիր կլինի ձայնային

ընդունակություններ ունեցող աշակերտի կողմից բանաստեղծության երաժշտական կատարումը, որը դասարանում կստեղծի շատ ջերմ ու տաք մթնոլորտ, կենդանի ձայնային հնչողությունը կբացի հույզերի հոգեցունց մթնոլորտ, բանաստեղծական խոսքից ու մեղեդուց հորդացող հոգեթով ավիքները աշակերտներին կհամակեն յուրօրինակ զգացողություններով:

2-րդ մոտեցում

Գրականություն-երաժշտություն կապ կարելի է ստեղծել այն ստեղծագործությունների ուսուցման ժամանակ, որոնց հիման վրա կան գրված օպերաներ: Օրինակ՝ Թումանյանի «Անուշ» պոեմի ուսուցման ժամանակ կարելի է կազմակերպել Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայի դիտումը, այնուհետև՝ անցկացնել արվեստի երկու գործերի զուգահեռ քննարկում: Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի ուսուցման ժամանակ կարելի է զուգահեռ դիտարկել Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերան, որը գրված է Թումանյանի վերոնշյալ պոեմի մոտիվներով: Գեղարվեստական պատկերներին զուգահեռ երաժշտական դրամատիկ պատկերակառույցներից, ձայնակերպարներից առաջացած հուզային դաշտը էլ ավելի կնպաստի գրական երկի բազմակողմանի ընկալմանը, խորքային վերլուծությանը:

3-րդ մոտեցում

Գրականություն-երաժշտություն կապի օգնությամբ կարելի է զարգացնել աշակերտների պատկերավոր մտածողությունը: Կարել է աշակերտներին հանձնարարել լսել մեղեդին, հետո գրել, թե ինչ պատկերներ են տեսնում, ինչ սյուժե կարելի է համադրել այդ մեղեդուն: Այսինքն՝ երաժշտության լեզվով կերտված ձայնապատկերները աշակերտները պետք է վերածեն բառապատկերների: Օրինակ՝ դասական երաժշտության մեղմ ու հոգեպարար հնչյուններից հյուսված ձայնապատումը աշակերտների երևակայական աշխարհում կստեղծի ինքնատիպ բառահյուսվածքներ՝ լի հույզերի, զգացմունքների, հուզապրումների յուրօրինակ նկարագրություններով:

4-րդ մոտեցում

Բարձր դասարաններում գրականություն-երաժշտություն միջառարկայական կապի օգնությամբ կարելի է աշակերտներին բացատրել սինեսթեզիական (համազգացողություն) պատկերակառույցների առանձնահատկությունները գրական և երաժշտական ստեղծագործություններում: Ուսուցիչը պետք է բացատրի, որ գրողի պատկերավորման համակարգում, երաժշտի ձայնաձևումների գեղագիտական տարածության մեջ հետաքրքիր շերտ է կազմում **սինեսթեզիան** (հուն.)՝ համազգացողությունը, երկու զգայական ընկալումների համատեղ ազդակների արթնացումը [1, էջ 1]: Սինեսթեզիան արտաքին ազդակներից եկած որոշակի զգացողությունների ընթացքն է, երբ մի զգայարանի գրգռումը, գրական պատկերում՝ տեսողական, առաջացնում է մեկ այլ զգայարանի ակտիվացում (լսողական), երաժշտության մեջ՝ հակառակ ընթացքով, որի արդյունքում ստեղծվում է կողմնակի զգայություն կամ մտապատկեր՝ կախված մի ուրիշ զգայարանի գործունեության հետ: Սինեսթեզիայի տեսակ են **ֆոնիզմը**, որը նշանակում է գույնի, պատկերի վերածում ձայնի, և **ֆոտիզմը**, երբ ձայնն է վերածվում գույնի, պատկերի: Ֆոնիզմն ավելի շատ բնորոշ է գեղարվեստական խոսքին, ֆոտիզմը՝ երաժշտությանը:

Եթե գեղարվեստական պատկերում սինեսթեզիան առաջանում է բառապատկերից առաջացած ձայնապատկերների գեղաձևումների տիրույթում, ապա երաժշտության մեջ՝ ձայնապատկերից հունդավորված մտապատկերների գեղագիտական դաշտում: Երաժշտության մոզական ուժի ազդեցությամբ ձայնը, հնչյունը արթնացնում

են գունային մտապատրանքներ, տեսլակերպարներ՝ լսողական զգայությունից անցում կատարելով տեսողական զգայական ընկալումների տարածություն: Երաժշտությունը դառնում է տեսանելի՝ ձևավորելով հնչյունային կերպարներ, ձայնային պատկերանիշեր: Հետաքրքիր է Հ. Հայնեի տվյալ իրողության բնութագրումը. «Ինչ վերաբերում է ինձ, ապա ձեզ արդեն ծանոթ է իմ երկրորդ երաժշտական զգայարանը, այն, որ ես ընդունակ եմ իմ լսած ամեն մի ձայնի մեջ միաժամանակ տեսնելու համապատասխան հնչյունային կերպար: Իր աղեղի յուրաքանչյուր շարժումով Պագանինին իմ աչքերի առջև կերտում է տեսանելի կերպարներ ու պատկերներ, հնչուն պատկերանիշների լեզվով նա ինձ պատմում է մի շարք վառ իրադարձություններ: Իմ առջև ծավալվում էր ասես գունապատկերների խաղ» [2, էջ 151]:

Ե՛վ գրականությունը, և՛ երաժշտությունը կենսական լիցքեր են ստանում կյանքից, բնության գույներից ու ձևերից: Իրականության կերպարահնչյունային արտահայտությունն է երաժշտությունը, գրականությունը՝ բառակերտ կերպարների դիպաշարային հյուսվածքը:

Ե. Չարենցի ստեղծագործությունների ուսուցման ժամանակ հետաքրքիր կլինի սինեսթեզիայի առանձնահատուկ չափումներով զուգահեռ վերլուծել Ե. Չարենցի «Ամբոխները խելագարված» պոեմը, որի հիմքում Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունն է, և Լյուդվիգ վան Բեթհովենի «Հերոսական» սիմֆոնիան, որում պատկերվում է Ֆրանսիական հեղափոխությունը: Ուսուցիչը պետք է բացատրի, որ սինեսթեզիան, առաջանալով տարբեր զգայական ներգործումների բարդ գույզորդումներից, և՛ չարենցյան բառապատկերներում, և՛ բեթհովենյան ձայնապատկերներում ստեղծում է տարակերպ զգայական ընկալումների հետաքրքիր շաղախ՝ տարրնթաց հյուսվածքով, բայց բովանդակային ընդհանրությամբ: Չարենցյան խոսքում բառապատկերն է ստեղծում ձայնապատկերներ, Բեթհովենի մոտ՝ ձայնակերպարները մտապատկերներ: Ողջ պոեմի ընթացքում չարենցյան բառակերտվածքները ստեղծում են հնչյունային, ձայնային ինքնատիպ միջավայր: Պատկերի մեջ ձայնի արթնացումը՝ յուրօրինակ ռիթմով, բառակառույցների ներքին շղթայական դարդարձումներով, ստեղծում է ազդեցիկ հնչյունապատկերներ՝ տարածական շերտերում խտացնելով գեղարվեստական պատկերի բովանդակային, գաղափարական ամբողջությունը: Տեսողական զգայական ընկալումներից առաջացած լսողական զգայապատկերները պատկերավոր մտածողության տիրույթում ստեղծում են ինքնատիպ մի աշխարհ՝ բառի, ձայնի, գույնի զարմանահրաշ գույզորդումներով:

Չարենցի «Ամբոխները խելագարված» պոեմի սկիզբը և Բեթհովենի «Հերոսական» սիմֆոնիայի մուտքը ունեն բովանդակային ընդհանրություն, որն էլ հնարավորություն կտա աշակերտներին տեսնելու երկու գործերում առկա միանման, բայց տարրնթաց սինեսթեզիական դրսևորումները: Գրական ու երաժշտական ստեղծագործություններում էլ պատկերն սկսվում է պայքարի կոչով, միասնության բացականչություններով, համախմբան, միահամուռ ուժի ստեղծման հորդորներով, ողջույնի հոգեցունց կանչերով. «Հեռո՛ւ, մոտիկ ընկերներին,– աշխարհներին, արևներին, Հրանման հոգիներին: –Բոլո՛ր նրանց, ում որ հոգին վառվում է վառ, Բոլո՛ր նրանց հոգիներին արևավառ», «–Ողջակիզվող հոգիներին– ողջո՛ւյն, ողջո՛ւյն» [3, էջ 70]:

Մարդկային հոգու և մտքի արթնացման, նոր կյանքի արարման խորհրդի գիտակցման և պայքարի աննկուն ոգու զգացողության հուզաշխարհը պատկերող չարենցյան տողերից լսելի են դառնում ձայնային հետաքրքիր ելևէջումներ: Պատկերի բացականչական կառույցները, հանգային դրսևորումները, ռիթմական բառաձևումները բառա-

պատկերի ներքին իմաստային հոսքերի տարածության մեջ բացում են ձայնային հորձանքներում ծավալվող հնչյունային գեղաձևումների հրավառություն, որը լի է հողմաշունչ բոցով, որն ուժգնանում է հրատոչոր արձագանքներով լցվող ձայնային հնչերանգներից: Պոեմի հետագա պոեմատային հյուսվածքում ձայնի վրա խարսխվող պոետական տարրալուծումները չարենցյան խոսքը դարձնում են առավել տեսանելի ու լսելի:

Եթե չարենցյան խոսքում բառապատկերից է ծնվում ձայնային ինքնատիպ սիմֆոնիան, ապա Բեթհովենի ստեղծագործության մեջ երաժշտության առեղծվածային հնչյուններից ծնվում են զգայապատկերներ, մտատեսիլներ: Բեթհովենի «Հերոսական» սիմֆոնիան սկսվում է երկու հզոր ակորդներով, թեթև քնարական պատկերներ են հյուսվում թավջութակների մեղմ ձայնային սոսափյունից՝ քամու սուլոցի ձայնային հնչեղությամբ, հետո թեմատիկ զարգացման մեջ թանձրանում են ձայնային գույները՝ խիստ խմբերգային հնչյուններով: Սկզբում հնչող հանդարտ ձայնային ալեվետումներից հաջորդում է հանկարծ պայթող հուժկու ակորդը, որը խորհրդանշում է ներքին ընդվզման պոռթկում, պայքարի կոչ, միասնության անհրաժեշտության շեշտադրում, ազատության պայքարի նվիրյալների կանչ-ողջույն: Հնչյունների գեղագիտական ընկալումների տարածության մեջ ստեղծվում են սինեսթեզիական մտապատկերներ՝ տեսանելի դարձնելով մարդկային հոգու պոռթկման սրբազան պահի խորհուրդը:

Սիմֆոնիայում արտահայտված թեման բազմաշերտ է. փոխելով տոնայնությունը, տեմպը, ռիթմը, նվագախմբային ձայնային գույները և ձայնի շարժման ուղղությունը՝ այն համադրվում է բազմաձայն թեմատիկ զարգացումների հոսքերին համահունչ, այնուհետև՝ նորովի հնչեղություն ստանում կրկնակի հակապատկերի բազմաձայն տեխնիկայի կիրառմամբ: Գլխապտույտ արագ տեմպի մեջ նորից հնչում է մարդկային ուժի ամենակարողության, անհնարին իրողությունների հաղթանակի ոգեղեն խորհուրդը: Հեղափոխության՝ որպես պատմական իրողության, ներքին խմորումների ու սրբնթաց զարգացումների մտապատկերները ամբողջանում են ձայնային փոփոխությունների գեղաձևումների տիրույթում:

Բովանդակային զարգացումների նույն նկարագիրն է Չարենցի պոեմում, որում զգայական ընկալումների հակադիր տիրույթում ենք տեսնում մարդկային հույզերի տարափը: Չարենցյան խոսքում էլ տեսանելի և լսելի են դառնում հեղափոխական պայքարի էլած ամենակարող ուժի՝ խելագար ամբոխի կրակված հոգու պոռթկումը, հրդեհված հույզերի անսանձ ժայթքումը: Չարենցը ստեղծում է պատկերներ, որոնք, գտնվելով անվերջ շարժման մեջ, նաև ժամանակի շարժումն են պայմանավորում իրենցով: Պատմական պահի նկարագրությունը բառապատկերների և դրանից առաջացած ձայնապատկերների յուրօրինակ գուգորդումներից ստեղծում է սինեսթեզիական հետաքրքիր զգայապատկերներ:

Շարժման ու գործողությունների նույն դինամիզմն ենք տեսնում նաև Բեթհովենի ստեղծագործության մեջ: Սիմֆոնիան ունի կերպարների հետաքրքիր պատկերասրահ՝ արտահայտչական ինքնատիպ բովանդակությամբ: Այն ընդգրկում է երաժշտական լեզվի գրեթե բոլոր արտահայտչամիջոցները՝ հնչյունային տարբնթաց բարձրություններ, տեմբր, տարբեր կառուցվածքային դրսևորումներ: Եվ զարգացումների այդ շղթայում ձայնային ինքնատիպ անցումներով բացվում է սիմֆոնիայի երկրորդ մասը՝ «Սգո երթը», որտեղ մեղեդու տիեզերական հնչյունները բացում են ոչ միայն ցավի ու տառապանքի, նահատակված հերոսների կորստի, այլև հերոսական սխրանքի վեհության պատկերային տարածություն:

Հուլյանի նույն տարափն ենք տեսնում չարենցյան բառապատկերներում՝ սրբազան պաշարի աներեր կամք, մահվան հետ առերեսման ներքին տագնապ, կորստի ցավ, լուսավոր երազների կարոտ, բայց և ոգեղեն պաշարի նվիրում, սխրագործ ճանապարհի անհրաժեշտության գիտակցում... Չարենցյան տողերից լսելի են դառնում և՛ մարտերի ահեղագոչ կրակոցների ձայները, և՛ շարժվող մթան անտեսանելի թևերին միահյուսված ցավի լուռ ձայնը, և՛ մարդկային արյան շիթերից տնքացող հողի հնոցը: Իսկ այս զգացողություններին զուգահեռ հետաքրքիր զարգացումներ են ստանում կրակի ու արևի պատկերակառույցները՝ սինեսթեզիական ինքնապիպ դրսևորումներով: «Աշխարհի «մաքրագործումը» Չարենցի պոեզիայում կատարվում է «կրակի» միջոցով, որի միջով անցնում է աշխարհը և կերպարանափոխվում» [4, էջ 118]:

Եզրակացություն: Գրականություն-երաժշտություն միջառարկայական կապի կիրառումը նպաստում է ուսուցանվող նյութի առավել խորքային վերլուծությանը, աշակերտների կողմից նյութի տարաշերտ ու ընդգրկուն իմացությանը, գեղարվեստական ստեղծագործության լայնածավալ ներկայացմանը, դասը առավել հետաքրքիր և բովանդակալից դարձնելուն:

Օգտագործած գրականության ցանկ

1. <https://hy.m.wikipedia.org/wiki>:
2. Հայնե Հ., Երկեր երկու հատորով, Երևան, 1959:
3. Չարենց Ե., Պոեմներ, բանաստեղծություններ, Երևան, ԵՊՀ հրատ., 1984:
4. Էդոյան Հ., Եղիշե Չարենցի պոետիկան, Երևան, ԵՊՀ հրատ., 1980:

Получено: 27. 02. 2023

Received: 27. 02. 2023

Рассмотрено: 09.03.2023

Reviewed: 09.03.2023

Принято: 20. 03. 2023

Accepted: 20. 03. 2023

Journal "Education in the 21st Century", Vol1-9/1/, 2023



This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

37.037.1 <https://orcid.org/0009-0007-9421-1229>

DOI:10.46991/educ-21st-century.v5.i1.081

THE EDUCATIONAL POTENTIAL OF JUDO IN THE DEVELOPMENT OF SCHOOLCHILDREN

Mesrop Barbaryan

Ph.D.,

Armenian State Institute of Physical Culture and Sport, Armenia

mesrop.barbaryan@sportedu.am

Summary

Today, sport in its various manifestations - mass, Olympic, disabled, professional, as an effective means of solving health, educational and educative issues of the younger generation, occupies a special place in our society. Field specialists consider sport as an educational environment with a very high socio-pedagogical potential. In this context, judo as a sport and as a pedagogical system, is used by many specialists in school-age children's comprehensive development process.